ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայաստանում տնտեսագիտական գիտահետազոտական բնույթի առաջին օջախը ստեղծվել է 1940թ.-ին՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի երկրաբանական գիտությունների ինստիտուտի կազմում մի խումբ էր, որ ձեռնարկել ու մշակել է հանրապետության ջրային ռեսուրսների օգտագործման գլխավոր պլանի տնտեսագիտական մասը: Այդ խմբի բազայի վրա 1941թ. կազմակերպվեց ինքնուրույն տնտեսագիտական սեկտոր (ղեկ. Ս.Խրիմյան), որը 1943թ. ընդգրկվեց Հայաստանի նորաստեղծ Գիտությունների ազգային ակադեմիայի կազմի մեջ, իսկ 1955թ. այն վերակազմակերպվեց տնտեսագիտության ինստիտուտի՝ քաղաքատնտեսության և ժողտնտեսության պատմության, արդյունաբերության ու գյուղատնտեսության էկոնոմիկայի բաժիններով (տնօրենի պաշտոնակատար՝ պրոֆեսոր Ա.Մարուխյան): Այդ տարիներին տնտեսագիտության ինստիտուտում կատարված և հրատարակված աշխատանքները նվիրված են եղել Հայաստանի տնտեսական զարգացման մի շարք գործնական հարցերի լուսաբանմանն ու վերլուծությանը՝ ծանր արդյունաբերության զարգացմանը, արդյունաբերության մասնագիտացմանն ու կոոպերացմանը, արտադրողական ուժերի զարգացմանն ու տեղաբաշխմանը: Ուսումնասիրվել են հանրապետության տրանսպորտի զարգացման տնտեսական հիմնահարցերը՝ երկաթուղային տրանսպորտի զարգացման հեռանկարները ՀԽՍՀ-ում և տրանսպորտի զարգացման հիմնական ուղղությունները Անդրկովկասի տնտեսական շրջանում:

1960 թվականից (տնօրեն՝ ակադեմիկոս Ա.Առաքելյան) տնտեսագիտական մտքի զարգացման համար բնորոշ են դառնում հարցերի պրոբլեմային մշակումները: Ինստիտուտում կազմավորվել են պրոբլեմների համալիր ուսումնասիրության նոր բաժիններ՝ կապիտալ ներդրումների և նոր տեխնիկայի արդյունավետության, արտադրողական ուժերի տեղաբաշխման, ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների, ագրարային հարաբերությունների, գիտատեխնիկական առաջընթացի կանխորոշման համալիր ծրագրերի մշակման, տնտեսաշվարկի և նյութական խթանման, հանքահումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, էկոլոգատնտեսական հիմնախնդիրների, ռեգիոնալ էկոնոմիկայի, գիտության էկոնոմիկայի, ժողովրդական տնտեսության և տնտեսագիտական մտքի պատմության, տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման բաժինները: Նշված ժամանակահատվածում ինստիտուտում հիմք է դրվում և հետագայում տնտեսագիտական մտքի զարգացման համար բնորոշ դառնում թեմաների մշակումն ըստ հիմնահարցերի: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը դառնում է տնտեսագիտության ուսումնասիրությունների կարևորագույն կենտրոն: Կարևորվում են հասարակական արտադրության, կապիտալ ներդրումների և նոր տեխնիկայի տնտեսական արդյունավետության, ազգային հարստության, ազգային եկամտի վերարտադրության, կուտակման և սպառման հարաբերությունների ուսումնասիրությունները: Հատուկ ուշադրության են արժանանում նաև Հայաստանի տնտեսության և հայ տնտեսագիտական մտքի պատմության զարգացման հարցերը: 1970-ականի սկզբներից ինստիտուտում առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել գիտատեխնիկական առաջընթացի տնտեսական հիմնահարցերի ուսումնասիրությանը: Առաջարկվել է տեխնիկական գյուտերի, ապրանքային նշանների արտոնագրման համակարգի արտոնագրային օրենքի ընդունում, մտավոր արդյունքների շուկայական հարաբերությունների արմատավորում, մտավոր սեփականության օրենսդրության մշակում և հաստատում, որակի բարելավում և այլ հարցեր: 1980-ական թվականների սկզբներից Տնտեսագիտության ինստիտուտը գլխավորել է տարբեր գիտական հաստատությունների (թվով 100-ից ավելի) կողմից հանրապետության գիտատեխնիկական առաջընթացի քսանամյա ժամանակահատվածների համար (1986-2005թթ. և 1991-2010թթ.) ամփոփ համալիր զարգացման ծրագրերի մշակման աշխատանքները: Հետազոտություններ կատարվեցին հանրապետության սոցիալ-տնտեսական համալիրի զարգացման հիմնահարցերի մշակման ուղղությամբ:

1980-ական թվականների երկրորդ կեսից (1987 թվականից՝ տնօրեն՝ ակադեմիկոս Մ.Քոթանյան) հրապարակված ուսումնասիրություններում շեշտադրվում են շուկայական տնտեսության պետական կարգավորման, կառուցվածքային բարեփոխումների ռազմավարության և մարտավարության հարցերը, այդ բնագավառում թույլ տրված բացթողումները և սխալները, հիմնավորվում հանրապետության ազգային տնտեսության ստեղծման, անկախության ու ազգապահպանության ռազմավարական ուղղությունները: Վերլուծության են ենթարկվել ագրարային արմատական բարեփոխումների նախնական արդյունքները, մշակվել են նաև Հայաստանի ագրոարդյունաբերական համալիրի հակաճգնաժամային միջոցառումների և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրույթները: Գիտական հետազոտություններ են տարվել Հայաստանի հանքային հումքի և հանքարդյունաբերության էկոնոմիկայի առանձին ոլորտների վերաբերյալ: Հայաստանի էներգետիկայի զարգացման տնտեսագիտական հիմնահարցերի ուսումնասիրությամբ տրվել է ՀՀ վառելիքաէներգետիկ համալիրի և նրա բաղկացուցիչ մասը կազմող էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման և վառելիքամատակարարման համակարգերի վիճակի վերլուծությունը:

1990-ական թվականների վերջերից (1999 թվականից՝ տնօրեն՝ ակադեմիկոս Վ.Խոջաբեկյան) կատարված հետազոտություններում շեշտադրվում են (նաև դրանից առաջ) բնակչության վերարտադրության, արտագաղթի և ներգաղթի հիմնախնդիրները, ռեսուրսային պոտենցիալի օգտագործման տնտեսագիտական հիմնահարցերը, գյուղատնտեսության մեջ զբաղվածության ձևավորման հիմնական ուղղությունները, ինովացիոն ծրագրերի խթանման պետական համակարգի ձևավորումը ՀՀ-ում, ՀՀ պղնձամոլիբդենային, բուն պղնձային և ոսկեբեր հանքավայրերի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, Հայաստանի վառելիքաէներգետիկ համալիրի կառավարման կառուցվածքի մշակման տնտեսագիտական հիմնահարցերը, ՀՀ արդյունաբերության, գյուղատնտեսության և ավտոտրանսպորտի զարգացման էկոլոգո-տնտեսական հիմնախնդիրները և այլ հարցեր:

2006 թվականից (տնօրեն՝ պրոֆեսոր Վ.Հարությունյան) ինստիտուտի գործունեությունն աչքի է ընկնում գիտական սերնդափոխությանն ուղղված հստակ ռազմավարությամբ և տնտեսության ձեռնարկատիրական

հատվածի ու պետական կառավարման համակարգի հետ գիտության ինտեգրմանն ուղղված նպատակային քաղաքականությամբ:

Հատկանշական է, որ ՀՀ կառավարության 07.03.2007թ. № 271-Ա որոշման համաձայն «Տնտեսական հետազոտությունների ինստիտուտ», «Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ», «Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպվել և միացվել են «ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, որը ս/թ հուլիսի 25-ին ՀՀ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրում ստացել է իր իրավաբանական ձևակերպումը: Այս հանգամանքն էլ ավելի է կարևորում Ինստիտուտի առջև դրված խնդիրների լուծման անհրաժեշտությունն ու պատասխանատվությունը Հայաստանի տնտեսության առջև ծառացած տնտեսական հիմնախնդիրների լուծման ասպարեզում: Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս ինստիտուտն իր լուրջ ներդրումն ունի գիտական բարձորակ կադրերի պատրաստման գործում: Եվ պատահական չէ, որ ինստիտուտում գիտական մկրտություն ստացած շատ մասնագետներ ներկայումս բարձր ու պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում հանրապետության ԲՈՒՀ-երում և պետական կառավարման մարմիններում: Ինստիտուտի գիտական հետազոտությունները նպատակաուղղված են ֆինանսական համակարգի կատարելագործման, տնտեսության իրական ու արտաքին հատվածների, սոցիալ-ժողովրդագրական արդիական հիմնախնդիրներին, ինչպես նաև տնտեսագիտության տեսությանն ու հայ տնտեսագիտական մտքի պատմությանը, որոնցում առաջիկա տարիներին շեշտադրումներ են արվելու դրամավարկային և հարկաբյուջետային հիմնախնդիրներին, ֆինանսական ենթակառուցվածքների զարգացմանը, կայուն տնտեսական աճի կատարելագործմանը, աշխատանքի շուկայի և զբաղվածության, բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի, բնակչության միգրացիայի և ժողովրդագրության հիմնախնդիրներին, արտաքին առևտրա-տնտեսական կապերի և միջազգային տնտեսական և այլ կարևորագույն հարցերի վրա:

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**